ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

17. 02. 2024 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 13-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2023-2024 ուսումնական տարվա I կիսամյակի քննաշրջանի (առանց լուծարքային շրջանի) ամփոփում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
2. Ֆակուլտետի ավարտական աշխատանքների նվազագույն և առավելագույն ծավալների հաստատում՝ ըստ կրթական ծրագրերի (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
3. 2023-2024 ուստարվա II կիսամյակի անվանական կրթաթոշակի թեկնածուների առաջադրում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
4. Մոնիթորինգի ենթարկված կրթական ծրագրերի հաշվետվությունների ներկայացում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտանակատար Կ. Պողոսյանը և նշեց, որ 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանը (առանց լուծարքային շրջանի) իրականացվել է համաձայն հաստատված ժամանակացույցների՝ 2024 թ. հունվարի 10-30-ն ընկած ժամանակահատվածում: Այն անցկացվել է պատշաճ կարգով. խախտումներ և բողոքարկումներ չեն արձանագրվել:

Ըստ քննաշրջանի արդյունքների՝ առանց առարկայական պարտքի են ավարտել «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության II և III, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Ռուսաց լեզու և գրականություն» I և II, «Ֆրանսերեն լեզու և գրականություն» I-IV կուրսերի ուսանողները:

Ուսանողների քանակով ամենաշատ առարկայական պարտքեր ունեցող կուրսը (8 ուսանող) «Անգլերեն լեզու և գրականություն» III կուրսն է:

Քննաշրջանի արդյունքների համաձայն՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետում առկա ուսուցման անվճար համակարգի ուսանողների

առաջադիմությունը կազմում է 96.6 %, վճարովի ուսուցման համակարգի ուսանողներինը՝ 77%:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-2024 ուստարվա I կիսամյակի քննաշրջանի (առանց լուծարքային շրջանի) արդյունքների ամփոփման մասին Կ. Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի մասին ևս զեկուցեց Կ. Պողոսյանը և նշեց, որ ի հավելումն «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգի՝ անհրաժեշտ է ֆակուլտետի կողմից ըստ կրթական ծրագրերի սահմանել ավարտական աշխատանքի նվազագույն և առավելագույն ծավալները:

Ըստ կրթական ծրագրերի՝ ամբիոնների վարիչների և կրթական ծրագրերի ղեկավարների կողմից առաջարկվեցին հետևյալ ծավալները՝ «Հայոց լեզու և գրականություն»՝ 40-50 էջ, «Ռուսաց լեզու և գրականություն»՝ 40-45 էջ, «Ֆրանսերեն լեզու և գրականություն» և «Անգլերեն լեզու և գրականություն»՝ 35-50 էջ, «Պատմություն»՝ 50-70 էջ, «Հոգեբանություն»՝ 45-55 էջ, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»՝ 45-50 էջ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ֆակուլտետի ավարտական աշխատանքների առաջարկված նվազագույն և առավելագույն ծավալները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ Կ. Պողոսյանը նշեց, որ համաձայն Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի՝ տրվող անվանական

կրթաթոշակներին կարող են հավակնել 4 և ավել կիսամյակ անընդմեջ գերազանցություն ունեցող ուսանողները: Զեկուցողը հավելեց, որ ֆակուլտետում ըստ կրթական ծրագրերի հատկացված է 4 անվանական կրթաթոշակ՝ «Մխիթար Գոշ» (Պատմություն), «Դավիթ Անհաղթ» («Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Հոգեբանություն»), «Գրիգոր Նարեկացի» («Հայոց լեզու և գրականություն»), «Շառլ Ազնավուր» («Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն»):

Վերոնշյալ կրթաթոշակների հավակնորդների թեկնածությունների վերաբերյալ Կ. Պողոսյանը նշեց, որ «Մխիթար Գոշ» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Պատմություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Կարենի Մարգարյանի թեկնածությունը, ով ունի վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Հոգեբանություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Հայկի Ավետիսյանի թեկնածությունը, ով ունի յոթ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Ռոզա Հովսեփի Բաղրամյանի թեկնածությունը, ով ունի յոթ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիլիա Արտավազդի Եղոյանի թեկնածությունը, ով ունի յոթ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

Հաջորդիվ ներկայացվեցին մասնաճյուղում մրցութային կարգով տրվող անվանական կրթաթոշակների համար («ԵՊՀ», «Արտակ Ցուցուլյան», Արցախյան 44-օրյա պատերազմում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անմահացած ուսանողների և շրջանավարտների անվան կրթաթոշակ) ֆակուլտետի կողմից առաջադրվող

թեկնածուները:

Նշվեց, որ «ԵՊՀ» անվանական կրթաթոշակի համար ֆակուլտետից ներկայացվում է «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիլիա Սմբատի Իսկանդարյանի թեկնածությունը, ով ունի յոթ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

«Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաթոշակի համար ներկայացվում է «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Կարինե Անդրանիկի Մուքաելյանի թեկնածությունը, ով ունի վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

Արցախյան 44-օրյա պատերազմում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անմահացած ուսանողների և շրջանավարտների անվան կրթաթոշակի համար ֆակուլտետից ներկայացվում է «Պատմություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարինե Մհերի Մելիքսեթյանի թեկնածությունը, ով ունի վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, դրսևորել է պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը: Ֆակուլտետի գիտխորհրդի անդամները հավանություն տվեցին առաջադրված թեկնածություններին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Առաջադրված ուսանողների թեկնածությունները ներկայացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի մասին զեկուցող Կ. Պողոսյանը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգի համաձայն՝ ԵՊՀ ԻՄ ֆակուլտետները երկամյա պարբերականությամբ պետք է իրականացնեն ծրագրերի ընթացիկ մոնիթորինգ:

Կրթական ծրագրերի մոնիթորինգի նպատակն է բարելավել կրթական ծրագրերի մատուցման որակը, այն համապատասխանեցնել կրթական ծրագրերի սահմանած նպատակներին ու համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակների բնութագրիչներին:

2023-2024 ուստարում ֆակուլտետում մոնիթորինգի ենթակա էին «Պատմություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Հոգեբանություն» կրթական ծրագրերը:

Մոնիթորինգի գործընթացն իրականացվել է ըստ գործող կարգի: Իրենց ծրագրերի նախորդ երկու ուստարիների կատարողականի ցուցանիշների հիման վրա մոնիթորինգի խմբերի ղեկավարները ներկայացրել են հաշվետվություններ՝ ներառյալ.

- ծրագրում ընդգրկված ուսանողների և ծրագրի շրջանավարտների հարցումների արդյունքները,
- ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների (փոփոխությունների) պլանի նախագիծը՝ հաջորդ երկու տարիների համար,
- ԵՊՀ ԻՄ վարչակազմին հասցեագրվող հիմնախնդիրները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ, դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Իրականացված մոնիթորինգը գնահատել բավարար և կրթական ծրագրերի մոնիթորինգի հաշվետվությունը ներկայացնել Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի դիտարկմանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Հ. Վանյան